

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Նշանավոր մարդկանց կյանքը» ընդհանուր խորագրով Հայպետհրատը լույս է ընծայել մի շարք գրքերի Բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ինճիկյանի գրքերից նվիրված է նշանավոր գրող ու հասարակական գործիչ Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ռուբեն Զարչյանը հանրամատչելի ու հետաքրքրական ձևով պատմում է մեծ լուսավորիչ ու գրող Խ. Արովյանի կյանքի, գործունեության ու ողբերգական վախճանի մասին։ Հայ ժողովրդի հանճարեղ քանաստեղծ Հովհաննես Բումանյանի մանկությունն ու պատանեկությունը իր գրքով համարում են երկրայացիք էլ բանաստեղծի դուստր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Նվարդ Բումանյանը։

«Ազվեսագիրք», Երևան, 1955 թ., 80 էջ։

Հայպետհրատը վերահրատարակել է միջնադարյան առակագիր Վարդան Ալեկեցու հատընտիր առակները՝ «Ազվեսագիրք» խորագրով, որն իր ժամանակին կազմել, վերամշակել ու խմբագրել է հանգուցյալ գրող Ակսել Բակունցը։ Գիրքն ունի նաև առաջարան, որը պատկանում է կազմողի գրչին։ Այդ առաջարանում մանրամասնորեն խոսվում է միջնադարյան հայ արձակի ասպարեզում առակների ունեցած նշանակության մասին։ Ազվեսագրի այս հրատարակությունը մասնալական է և նպատակ ունի հանրամատչելի լեզվով ընթերցող լայն խավերին ծանոթացնել միջնադարյան հայկական առակների հետ։

ԱՐԱՋԻ, «Երկերի ժողովածու», հատոր 1-ին,

Երևան, 1955 թ., 367 էջ։

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայում արդի, սովետահայ գրականության ավագ ունեղի նշանավոր գեմերից մեկի՝ Մովսես Արազու «Երկերի ժողովածու»-ն երեք հատորով։ Արդեն լույս է տեսել առաջին հատորը, որն ընդգրկում է գրողի մի շարք կարևոր ստեղծագործությունները՝ պատմվածքներն ու երազվածքները։ Առաջին անգամ Արազու երկերի մեջ է մտնում նրա «Դոն Կարապետի արշավանքը» երգիծական պատմվածքը, որը ժամանակին լույս էր տեսել «Մուրճ» հանդեսում 1912 թվին։ Այս հատորում սեղ գտած երկերը ընդգրկում են ինչպես նախասովետական շրջանի կյանքը, այնպես և սովետական կյանքի առաջին շրջանը։ Նախասովետական շրջանի գործերի մեջ Արազին ընդգծել է սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը կյանքում, հասարակության ներքին խավերի տանջալից գոյության պայմանները, ինչպես և բողոքն ու դժգոհությունը կյանքի այդպիսի պայմանների դեմ։ Այդ տեսակետից զեղարկվեցող հայտնական հաջող օրինակ է նրա «Արևը» հուզիչ եռօրվանիցը, որը հանրաճանաչ է, և դարձել է դասագրքերի զարգու։ Շատ հաջող է պատկերված Արազու երկերում Սովետական իշխանության առաջին տարիները Հայաստանում՝ կոլեկտիվացումը, էլեկտրիֆիկացիան ու շինարարությունը և այլն։

Գ. ԳԵՄԻՐՃՅԱՆ, «Երկերի ժողովածու», հատոր 1-ին, Երևան, 1955 թ., 523 էջ։

Այսի է լույս տեսնել սովետահայ արձակի և դրամատուրգիայի վարպետ Գեորգի Գեմիրճյանի երկերի հրատարակությունը, որը բաղկացած է լինելու 6 հատորից։ Արդեն լույս է տեսել 1-ին հատորը, որը պատկանում է հեղինակի պատմվածքներն ու վիպակները։ Պատմվածքների «Անցյալի ուրունք» շարքում պատկերված է նախասովետական շրջանի կյանքը, Համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով ստեղծված ծանր պայմանները հայկական գյուղում և այլն։ Այդ տեսակետից ուշագրավ են «Ավերորդը», «Ժպիտը», «Խանութպան», «Միայն մեկը» պատմվածքները և ուրիշները։ «Նրանց ժպիտը» խորագրով պատմվածքների շարքում Գեմիրճյանը ներկայացրել է Սովետական իշխանության առաջին տարիները Հայաստանում։ Այստեղ էլ իրենց զեղարկեստական անմիջականությունը աչքի են ընկնում «Ընկերներ», «Մերկե», «Կայարանի Ակորդ», «Փարճանք», «Մամոն», «Հողը», «Արդու» և մի շարք այլ պատմվածքներ։ Այս հատորի մեջ են զետեղված նաև «Ռաշիդ» և «Երկրորդ» վիպակները, որտեղ ավելի լայն ծավալով է ներկայացված կոլեկտիվացման շրջանի կյանքը հայկական գյուղում։

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, «Յրիկը պատմաբանական լույսի տակ», Երևան, 1955 թ., 121 էջ։

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել բազմավաստակ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի նոր աշխատությունը, որը վերաբերում է միջնադարյան հայ խոշորագույն բանաստեղծ Յրիկի կյանքին ու գործունեությանը։ Թեև հեղինակը իր աշխատությունը վերնագրել է «Յրիկը պատմաբանական լույսի տակ», բայց այն ավելի լայն է ու խոր իր ընդգրկմամբ ու սահմաններով։ Պատմաբանական վերլուծությունից բացի, հեղինակը անդրադառնում է Յրիկի ստեղծագործության գաղափարական բովանդակության ու բանասիրական մի շարք վիճելի հարցերի, որոնք շատ են զբաղեցրել ժամանակի ընթացքում մեր գրականագետներին, պատմաբաններին ու բանասերներին։

Յրիկի կյանքի ու գործունեության քննության մեջ հեղինակը անդրադառնում է միջնադարյան հայ մեծ բանաստեղծի մասին գրված աշխատանքներին, հաճախ բանավեճի մեջ մտնելով մի քանի հեղինակների հետ այս կամ այն հարցի կապակցությամբ։ Իր քննական հետազոտության մեջ Ա. Հովհաննիսյանը հատկապես կանգ է առնում վերջերս Նյու-Յորքում լույս տեսած Տիրալ արքեպիսկոպոսի բազմամյա աքնաչառ աշխատանքի վրա՝ Յրիկի տաղերի հավաքման և նրանց գիտական տեքստը հրատարակելու համար։ Ա. Հովհաննիսյանը մի շարք գիտողություններ է անում «Գիվան»-ին կցված ընդարձակ քննական ուսումնասիրության առթիվ, ցույց տալով անհրաժեշտություններ ու վիճելի

կետեր Ֆրիկի կենսագրության, գործունեության և ստեղծագործության գնահատման մեջ:

Հիմնվելով Ֆրիկի ստեղծագործության մեջ պահպանված վիճալույթների ու փաստերի վրա և դրանք համադրելով պատմական արժանահավատ ու ստույգ աղբյուրների հետ, Ա. Հովհաննիսյանը իր հետազոտության մեջ բնութագրել է Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը, սոցիալ-քաղաքական ու տնտեսական հանգամանքները: Այս տեսակետից հատկանշական է Ֆրիկի «Վասն Արդուն զանին և Բուշային» տաղի մեջ պահպանված «մասաս» և «մասասչիք» հասկացողությունների բացատրությունը Ա. Հովհաննիսյանը մերժում է մինչ այդ եղած բոլոր բանասերների, այդ թվում և Տիրայր արքեպիսկոպոսի, բացատրությունը «մասաս»-ի և «մասասչիք»-ների մասին և պատմական աղբյուրների բաղադրությամբ ապացուցում, որ «մասաս»-ն ու «մասասչիք»-ը առևտրական միջնորդ ընկերություն է եղել մոնղոլական տիրակալության օրոք:

Իր աշխատության մեջ Ա. Հովհաննիսյանը ուղղումներ է նոր մեկնաբանություններ է առաջարկում Ֆրիկի կենսագրության ու գրական ստեղծագործության վերաբերյալ, մասնավորապես առանձին երկերի գրության ժամանակի ճշգրտման, անձնական կյանքի ընթացքի ու վիճակի մասին:

Ա. Հովհաննիսյանը իրավամբ հակադրվում է այն բանասերներին ու գրականագետներին, որոնք նշանավոր «Գանդաս»-ը Ֆրիկի ստեղծագործությունը չեն համարում, կամ թե համարում են ժողովրդական բանահյուսության նյութ, մշակված Ֆրիկի կողմից: Նա բազմաթիվ փաստարկներով համոզում է, որ «Գանդաս»-ը թիվում է Ֆրիկի ստեղծագործության ամբողջական ոգուց և հանդիսանում է նրա բարձրակետը:

ԱՐԻՍՏՈՏԵԼ, «Պոետիկա», Երևան, 1955 թ., 252 էջ:

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայել հունական մեծ մտածող, համաշխարհային կուլտուրայի խոշորագույն դեմքերից մեկի՝ Արիստոտելի «Պոետիկա» աշխատությունը, որը ռուսերենից հայերեն է թարգմանել փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արամայիս Կարապետյանը: «Պոետիկա»-յի տեքստին կցված է նաև ընդարձակ հետազոտություն, որը պատկանում է նույնպես Արամայիս Կարապետյանի գրչին: Թարգմանությունը, ինչպես նշվում է առաջաբանի մեջ, համեմատված է հունարեն բնագրի հետ, հունարենին գիտակ Հ. Բարթիկյանի օգնությամբ:

Արիստոտելի «Պոետիկա» աշխատության հայերեն թարգմանությունը չափազանց կարևոր ու գնահատելի երևույթ է հայ գրականության մեջ: Այդ աշխատությունը թարգմանված է աշխարհի մի շարք ժողովուրդների լեզուներով և իր շուրջն ստեղծել է մեծաթանակ մեկնաբանություններ: Հայերը զեռ շատ հնում թարգմանել են Արիստոտելի մյուս երկերը բնագրից, ինչպես օրինակ՝ «Մետորոլոգիկոս» Արիստոտելի, որոնցից շատերը կարևոր արժեք են ներկայացնում բնագրին հարազատ մնալու տեսակետից: Արիստոտելի «Պոետիկա»-յի հիշյալ թարգմանությունը լրացնում է եղած բացը:

Իր ուսումնասիրության մեջ դոկտոր-պրոֆեսոր Ա. Կարապետյանը նախ կանգ է առնում Արիստոտելի փիլիսոփայական հայացքների վրա, որոնց առնչված են նրա էսթետիկական հայացքները: Անդրադառնալով «Պոետիկա»-յի վերլուծությանը, ուսումնասիրության հեղինակը մանրամասնությամբ քննում է դրամատիկական և էպիկական պոեզիայի մասին արտահայտած Արիստոտելի դրույթները և բազմաթիվ այն մեկնաբանությունները, որոնք հանդես են եկել դրանց շուրջը էսթետիկայի պատմության մեջ:

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՑԱՆ, «Պոետիկա», 1955 թ., 122 էջ:

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է ընծայում Մ. Խերանյանի այս ժողովածուն պարունակում է տարբեր ժամանակներում գրած ու տպագրած հետևյալ պոեմները՝ «Մոկաց Միրզան», «Արա Գեղեցիկ և Եամիրամ», «Ասք հերոսական» և «Արագիլներ»: «Մոկաց Միրզա» պոեմը հիմնված է ժողովրդական նույնանուն վիպերգի վրա: Ժողովրդական վիպերգի համառոտ, բայց շատ հարուստ բովանդակությունը բանաստեղծից բացել է, նոր հունի մեջ գրել զնայների զարգացումը: Խերանյանի պոեմից ընթերցողը լայն պատկերացում է ստանում Մոկաի ազգագրական միջավայրի ու կենցաղի մասին: Եամիրամը պոեմը հանելի տպավորություն են թողնում համապատասխան տեղերում օգտագործված ժողովրդական երգերն ու նրանց ոգով ստեղծված ինքնուրույն ընդօրինակումները: «Արա Գեղեցիկ և Եամիրամ» հայրենասիրական պոեմն էլ հիմնված է ժողովրդական առասպելի վրա, որտեղ սակայն հեղինակը խորենացու «Հայոց պատմության» մեջ հիշատակված առասպելի մի քանի տողի հիման վրա ստեղծել է զեմբեր ու գործողություններ, ըստ որում երբեք չլեզվելով առասպելի բուն ժողովրդական ոգուց:

«Ասք հերոսական» պոեմն արդեն վերաբերում է ժամանակակից կյանքին: Այնտեղ պատկերված են Հայրենական Մեծ պատերազմի շրջանի մարտիկների խոհերն ու ապրումները: «Արագիլներ» պոեմի նյութը վերցված է արտասահմանում ապրող հայերի կյանքից: Այնտեղ նկարագրված է, թե ինչպես Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ թյուրքական զավթիչները գաղութատան տեսան առաջադրանք ու անգլեն հայ աշխատավորների հետ Այդ կոտորածներից ազատված մի ընտանիքի պատմություն է ընկած պոեմի առանցքում: Նկարագրված է, թե ինչպես, վերջապես, տարագիր այդ ընտանիքը հանգրվան է ստանում Սովետական Հայաստանում:

Վ. ՆԱԼԱՆԴՅԱՆ, «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանց», Երևան, 1955 թ., 250 էջ:

Երևանի Պետական համալսարանի հրատարակչությամբ լույս տեսած բանասիրական գիտությունների լեզնաբան Վ. Նալբանդյանի «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանց» աշխատությունը նվիրված է սովետահայ գրականության արձակի խոշորագույն վարպետ Դ. Դեմիրճյանի «Վարդանանց» պատմավեպի հետազոտմանն ու ուսումնասիրությանը:

Հեղինակը անդրադառնում է Վարդանանց պատերազմի պատմական հիմքերին ու աղբյուրներին Առաջին գլխում Հեղինակը հանգամանորեն քննում է 151 թվի ազատամարտության ու պատերազմի մասին հայ պատմիչների հազարգամ բոլոր տեղեկությունները, և այդ բոլոր համադրելով, մի ընդհանուր եզրակացության է գալիս Վարդանանց պատերազմի բազմաբան-տեղանակումն ու հասարակական զրգապատճառների ու մղումների մասին Հեղինակը առանձնապես երկար է կանգ առնում 5-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Աղիշեի պատմության վրա, որովհետև Աղիշեն է, որ առավել լիակատարությամբ ու խորությամբ է ընդգրկել 151 թվի ազատամարտության հետ կապված դեպքերն ու նրանց մանրամասները:

Նախորան Գ. Գեմիրճյանի «Վարդանանք» պատմական վեպի վերլուծությանն առջինը Հեղինակը անդրադառնում է այն հարցին, թե ինչպես է արտացոլվել Վարդանանց պատերազմի թիման նախատվեա՞ն հայ ազգեղբարվեստական գրականության մեջ: Այստեղ եկատի են առնված ինչպես պոեզիան, այնպես և գրամատուրգիան և արվեստը:

Իր աշխատության մեծագույն մասը Հեղինակը նվիրել է Գ. Գեմիրճյանի «Վարդանանք» վեպի բազմակողմանի վերլուծությանը: Առանձնապես զննատու է Գեմիրճյանի «Վարդանանք»-ը որպես հայ ժողովրդի հավաքական ուժի, ժողովրդական մասսաների ակտիվության գեղարվեստական արտացոլում: Այնուհետև Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես «Վարդանանք»-ում լայն պատկերում է ստացել նաև ժողովուրդների բարեկամությունն ու համերաշխությունը: Ըստ ամենայնի վերլուծված են «Վարդանանք» պատմական վեպի գեղարվեստական առանձնահատկությունները:

ԱՆԱՀԻՏ ԱՄԱԼԻՑԱՆ, «Մարավ», Երևան 1955 թ., 487 էջ:

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս է բծախլի շնորհիվ արձակագիր Ա. Սահյանի «Մարավ» վեպի 1-ին գիրքը: Այս վեպի վրա Սահյանն աշխատել է երկար տարիներ: Այդ նպատակով նա մի առժամանակ եղել է շինարարների մոտ, ծանոթացել նրանց կյանքին ու կենցաղին: Իր այս վեպի կենտրոնում Հեղինակը գրել է չրի և ոռոգման հարցը: Վեպի առաջին գիրքը պատկերում է նախառոգման հայ գյուղի կյանքը, մասնավորապես չրապակաս գյուղի ներքին առօրյան ու տնտեսական ծանր վիճակը: Ընթերցողի առաջ պատկերվում է նահապետական հայ գերդաստանը իր հոգսերով ու վշտերով: Նկարագրված է հանրային կյանքը, ներքին կենցաղը, տոնավաճառները սրբավայրում, կոիմներն ու երկպառակությունները չրի համար և այլն: Այնուհետև Հեղինակը վեպի գլխավոր հերոսին գյուղական միջավայրից տեղափոխում է քաղաք, կրթության տալիս և դարձնում է նշանավոր մարդ: Վերջինս շատ օգտակար գործ է կատարում իր հայրենակիցների համար, հետաքրքրվելով ոռոգման հարցերով: Իր

վեպում Հեղինակը նկարագրում է նաև իմպերիալիստական առաջին պատերազմից առժամ փոխտեսկաների ծանր վիճակը:

ՌԱՐՈՆԳՐԱՆՈՒ ՅԱԿՈԲ «ՊԱՐՏԻԶՊԱՆԸ»
ԼԱՅՆՐԱՆ

Հայաստանի պետական հրատարակչությունը վերահրատարակել է Հեղիկ Հուշավոր բանաստեղծ, արձակագիր, գրամատուրգ և հրապարակախոս Ռարինգրանավ Տադորի «Պարտիզանը» պոեմների ժողովածուի հայերեն թարգմանությունը:

«Պարտիզանը» պոեմների ժողովածուն անգլերենից հայերեն է թարգմանել Համիկ Թումանյանը: Այդ թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել 1922 թվին Վիեննայում: «Պարտիզանը» ունեցել է նաև իր այլ թարգմանություն, որը լույս է տեսել 1919 թվին Քեհրանում: Տադորի ստեղծագործությունը քաջ հայանի է եղել հայ ընթերցող հասարակությանը հայերեն հրատարակված նրա պատմվածքներով և առանձին հոգովածներով:

Տադորի ստեղծագործությունը համակված է մարդասիրության, ժողովրդայնության ու խաղաղասիրության վսեմ գաղափարներով, որոնք արտահայտվել են իմաստասիրական խոր ու հմայիչ պատկերներով, գեղարվեստական զոնազեղ ձևերով: Եստ խոշոր ու նշանակալից տեղ է գրավում Տադորը համաշխարհային գրականության մեջ: Բայց առավել մեծ է Տադորի դերն ու նշանակությունը Հեղիկ ժողովրդի գրականության համար: Տադորն սկսել է գրել շատ վաղ չրանից, դեռ պատանի հասակից: Առաջին պատմվածքը նա տպագրել է 19 տարեկան հասակում, որով Հուշակից որպես Քեղզալի տաղանդավոր գրող: Ունենալով մեծ ձիրք և ընդունակություններ, Տադորը դեռ պատանի չրանից ցուցաբերել է բազմակողմանի նետաբեքություն արվեստի տարբեր ընթացվածքների նկատմամբ: Նա ուսումնասիրել է բանաստեղծությունը, գեղանկարչությունը, թատրոնը, երաժշտությունը: Այգրեհական չրանում երգել է գլխավորապես բնության երևույթները: Այդ չրանի նրա ստեղծագործության վրա նկատվում է վիշնուիտյան փնտրերգության խոր ազդեցությունը: Տադորի ստեղծագործությունը ժողովել է գրական գրեթե բոլոր ժանրերի ընթացվածքում: Նա գրել է բանաստեղծություններ՝ «Առավոտյան երգեր» (1884 թ.), «Ոսկե համերաշխություն» (1895 թ.), «Գնատանցում» (1895 թ.), 1905 թ.), «Փախստական» (1918 թ.), «Պարսերի» (1925 թ.) և այլն: Տադորի լուսավազույն գրամաներից հանրահայտի են «Զուր» (1892 թ.), «Զիտրա» (1896 թ.), «Զիտրանդազա» (1892 թ.), «Մաշա» (1902 թ.), «Փուտը» (1912 թ.) և այլն: Տադորը գրել է նաև պատմվածքներ ու վեպեր: Պատմվածքներից հեղական գրականության մեջ մեծ ժողովրդականություն է վայելում «Էջիզություններ» խորագրով ժողովածուն, որտեղ գեղարվեստական մեծ վարպետությամբ պատկերված է բանաստեղծի մանկությունն ու պատանեկությունը: Վեպերից նշանավոր են՝ «Գորա» (1909 թ.), «Խորանկում» (1906 թ.), «Տուն և աշխարհ» (1916 թ.) և այլն:

Տագորը զրազվել է նաև գրական-գեղարվեստական, փիլիսոփայական հարցերով և գրել մի շարք բնագիտական-հրապարակախոսական հոդվածներ և Հայտնի է Տագորի մի աշխատությունը, որը կոչվում է «Սանդհանա» («Կյանքի ստեղծագործությունը»)։ Այնտեղ ամփոփված են Քոլկուիթի համալսարանում կարդացած Տագորի դասախոսությունները, որտեղ հեղինակը արծարծում է շարի, բարու, գեղեցիկի ու գեղազիտական մի շարք այլ հարցեր և իզգ աշխատության մեջ Տագորը կյանքում ամեն ինչ համարում է Աստուծաներգործություն և ունի գաղափարը նա զարգացնում է «Կախիկա», «Կենյա» և «Գիտանժալի» կրոնական պոեմներում։

Քացի գրական ստեղծագործությունը, Տագորը Հայտնի է նաև որպես հասարակական գործիչ։ Նա մի շարք նախապահություններ է կատարել աշխարհի տարբեր երկրներում, եղել է ԱՄՆ-ում, Յապոնիայում, Չինաստանում, իսկ 1930 թվին՝ ՍՍՄԽ-ում, Մոզիսական Միության մասին իր ազդեցությունները Տագորն արձանագրել է «Նամակ Ռուսաստանից» գրքում։ 1912 թվին առաջին անգամ անգլերեն թարգմանվում է Տագորի «Գիտանժալի» պոեմների ժողովածուն, որի համար 1913 թվին ստանում է Նորելյան մրցանակ։ 1914 թվին բրիտանական կառավարությունը նրան շնորհում է բարոնետի տիտղոս, բայց 1919 թվին հասարակական մեծ գործիչն ու հայրենասերը հրաժարվում է այդ տիտղոսից, ամբաստանական նամակ ուղարկում անգլիական գործակալ Մահանդան Կարմանդ Գանդիին, Ամբիտարում բրիտանական զորքերի կողմից անեղ ու անզեն հնդկի ապստամբների զեղակահարության առթիվ։

Իր կյանքի վերջում Տագորը հանդես եկավ համաշխարհային բազմաթիվության մոլի թշնամի գերմանական ֆաշիզմի դեմ, մերկացնելով ու անարգելով նրա բարդարարական և արյունաբեր բաշարականությունը։

Տագորը մեռավ 1941 թվին։ Նա մեծ ծառայություն է մատուցել բնագիտական գրականության զարգացման գործում և հատկապես բնագիտական գրական լեզվի հիմնադրման ու կատարելագործման ասպարեզում։ Նա շատ լավ գիտեր մայրենի բարբառները և գրականությունը հարստացնում էր ժողովրդական խոսակցական լեզվի արտահայտություններով, ամեն կերպ գրական լեզուն մաքրելով մեռած ու բարացած հին ստեղծարարների ծանրաբեռնվածությունից։ Տագորը պաշտպանում էր գրական լեզվի մաքրությունն ու պարզությունը, աշխատավորական ամենալայն խավերին հասկանալի ու մաշակելի լինելու սկզբունքը։ Ահա թե ինչու Տագորի ստեղծագործությունը Հնդկաստանում մեծ ժողովրդականություն է վայելում։

Ռաբինդրանաթ Տագորի ստեղծագործության ամենաբնորոշ գիծը նրա քնարերգական զորեղ շունչն է, որը նկատվում է ոչ միայն նրա բանաստեղծություններում ու պոեմներում, այլև գրամաներում ու պատմվածքներում։ Տագորը Արևելքի հերթափայլի աշխարհի ֆանտաստիկ գույները ներհյուսել է սահուն ու մեղմ երաժշտական ռիթմիկ խոսքին և ստեղծել է իսկական քնարերգության գոգարիկ նմուշներ։

Այդ տեսակետից հատկապես համաշխարհային ճանաչում ունեն «Գիտանժալի» և «Պարտիզաններ» պոեմների ժողովածուները, որոնք թարգմանված են աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով։

Տագորը իր «Պարտիզաններ» ժողովածուն կոչել է «Սիրո և կյանքի պոեմներ»։ Դրանք արձակ բանաստեղծություններ են, չունեն որոշակի գործողություն ու դեպքերի զարգացում։ Դրանք սիրո և գեղեցկության ու կյանքի բազմազան երևույթների նկատմամբ բանաստեղծի խոհերն ու խորհրդածություններն են, որոնք ստեղծված են բնորոշված ու աչքի են ընկնում գեղարվեստական պատկերների արտակարգ շրջությունում։ Մեր աչքի առաջ Տագորը բացում է Հնդկաստանի հրաշագեղ բնապատկերը՝ արևելքի խորհրդավոր դիշերը, փայտածածկ հյուրերն ու խրճիթները, լաստանավեր գետերի ու լճերի վրա, խնկարույր պարտեզները, արևելյան շուկան, անտառի սոսափույնը։ Մենք տեսնում ենք խեղճ ու արևառ մարդկանց, լուսավորված շրջմոլիկները, թափածո երգերը, առաջնության հավերժի զայլալը, բաժան ենք ցողաթաթախ լոռաների, երկրներանդ ծաղիկների ու շրջվաղների բույրը, տեսնում ենք սավորներով չբի դնացող աղչիկներին, և այլ բազմաթիվ պատկերներ ու տեսարաններ։ Տագորն այդ բոլորը ներկայացնում է հոգեկան խորունկ զգացմունքների ու հույզերի ելեկներով։ Ամենուրեք նկատում ենք Տագորի սերը մարդուն։

Տագորի «Պարտիզաններ» արձակ պոեմների թարգմանության դժվարին գործը վարպետորեն է կատարված Համլիկ Ռամանյանի կողմից։ Թարգմանության մեջ պահպանված են ոչ միայն պոեմների բովանդակության յուրահատուկ գծերը, այլև նրանց արտահայտական անմիջականությունն ու երաժշտական ռիթմիկ շեշտը։

Հնդկի մեծ ժողովրդի հռչակավոր գրող Ռաբինդրանաթ Տագորի «Պարտիզաններ» պոեմների ժողովածուի հայերեն նոր հրատարակությունը մեծ սիրով և գոհունակությամբ է ընդունվել հայ ընթերցող հասարակության կողմից։

Վ. Վ.

